Ս. Ստեփաննոսի վանքը, և Արմաւիրեան Ս. Նշանի մատուռն։

Նա և հրաւիրանօք բարեկամաց մկրտել եմ 7 երեխայ և պսակել եմ 6 զոյգ ամուսնացողաց՝ Երեւան, Նախիջեւան և Բագու քաղաքներումն։

Ժե. Վերջապէս յաւելում իբրեւ վաւերացումն կենսագրութեանս՝ իմ Արքեպիսկոպոսութեան կոնդակի պատճէնն՝ գրուած ի 16-ն յունվարի 1888 ամի, հմբ. 30, որ է հետեւեալն.

Մակար եպիսկոպետ.
և Կաթուղիկոս
ամենայն հայոց
1885

Մակար ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամաց Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի:

Բարեջան Առաջնորդի՝ թեմին Հայոց Շամախւոյ Գերապատիւ Մեսրովբ Արքեպիսկոպոսի՝ հարազատի սրբոյ Աթոռոյս և մեր Յիսուսաւանդ ողջոյն և Աստուածային օրհնութիւն։

Գովանի նշանակք առաքելաշաւիղ եպիսկոպոսութեան, որովք զանձիդ ընծայեցուցանես յօրինակ բարի բանաւոր Հօտին Քրիստոսի, յանաղարտ պահպանութիւն կարգաց և կանոնաց Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ, այլ և բազմամեայ անձնադիր ծառայութիւնդ ի պաշտաման անդամութեան Սինոդի սրբոյ Էջմիածնի՝ հարկադրեն զմեզ արժանաւորել զԳերապատուութիւնդ՝ մերոյ Հայրապետական առանձնաշնորհութեանց, վասնորոյ, այսու օրհնութեան կոնդակաւ մերով, ամբառնամք զՔեզ ի պատիւ Արքեպիս-